

# ԻՐԱՎԱԿԱՆ Մշակույթ

Չկա Հասարակությանն  
առանց իրավունքի  
Ubi societas ibi jus

Ե Ր Կ Չ Ա Ր Ք Ա Ք Ե Ր Ք  
թիվ 3 (23)  
2008 թ. փետրվար 29

ՈՉ ՄԻ ԱՐԴԱՐԱՑՈՒՄ NO EXCUSES!

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

Աշխարհում դեռևս 72 միլիոն երեխա դուրս է մնում դպրոցից, 774 միլիոն չափափաս մարդ անգրագետ է, 18 միլիոն նոր ուսուցիչների կարիք կա՝ մինչև 2015 թ. Հազարամյակի զարգացման և համընդհանուր կրթության մյուս նպատակներին հասնելու համար:

Վերջին յոթնամյակի ընթացքում կրթության բարելավման գործունեության վերաբերյալ «Ոչ մի արդարացում» ("No excuses") վերնագրված գեկույցում դասակարգված են 156 զարգացող և 22 դժուր երկր-

ժամանակն է, որ կառավարությունները բավարարեն աշխարհի երեխաների պահանջները առանց որևէ պայմանականության,- ասել է Համընդհանուր կրթության կրթության (ՀԿԳԿ) քարոզարշավի նախագահ Քայլաջ Սաթարթին:

Ջարգացող երկրների շարքում դասակարգման վերին հորիզոնականները զբաղեցրել են հինգ երկրներ՝ Մավրիկյան Հանրապետությունը, Լատվիան, Ուրուգվայը, Հունգարիան և Սլովակիան, որոնք մինչև 2015 թ. սահմանված վերջնաժամկետին



հասնելու նրջավազում կրթության ոլորտում ստանձնած պարտավորությունների կատարման բարձր մակարդակի շնորհիվ լավ արդյունքներ են ապահովել:

Առավել հարուստ երկրների գնահատման չափանիշ է համընդհանուր կրթության նպատակներին հասնելու համար բավականաչափ միջոցներ հատկացնելու իրենց խոստումների կատարողականությունը:

22 առավել հարուստ երկրների շարքում դասակարգման առաջին հորիզոնականում են Սիդեյլանդները և Նորվեգիան, իսկ վերջինում՝ Ավստրիան:

Ձեկույցն ազդու կերպով ցույց է տալիս, որ համընդհանուր անվճար կրթության համար անհրաժեշտ ներդրումների ու համապատասխան քաղաքականության բացակայության հետևանքով տուժում են առավել խոցելի խմբերը. դպրոց չհաճախող երեխաների մեկ երրորդը հաշմանդամ է, իսկ Աֆրիկայում հաշմանդամ երեխաների միայն 10%-ն է դպրոց հաճախում:

Կրթության ոլորտի նույն անմխիթար վիճակն է նաև հակամարտությունների գոտիներում՝ Սիեռա Լեոնեում, Սոմալիում, Լիբերիայում և այլուր:

«Յուրաքանչյուր անհատ, անկախ նրա ռասային, սեռային կամ կրոնական պատկանելությունից, պետք է ապահովվի առնվազն միջնակարգ կրթությամբ: Յուրաքանչյուր կառավարություն պետք է ակնաբախ լինի իր քաղաքացիների ծայրին և պատշաճ ֆինանսավորում ու որակյալ կրթություն երաշխավորի նրանց համար:

Ձեկույցից պարզորոշ է, որ առաջընթացի ներկա տեմպերով շուրջ մեկ միլիարդ մարդ կրթություն ստանալու հնարավորություն չի ունենա ոչ միայն առաջիկա յոթ տարիների, այլև ողջ կյանքի ընթացքում:

ներ: Այդ պետությունների առաջնորդները գեկույցում գնահատվել են դպրոցական շարքային ուսուցիչ կողմից: Գնահատականներին զուգահեռ՝ տրված են նաև «ուսուցչական դիտողություններ»:

Գնահատման չափորոշիչներն են՝


1. համընդհանուր միջնակարգ կրթության ապահովում.
2. քաղաքական կամքի դրսևորում.
3. դպրոցում սովորող աշակերտների թվի աճ.
4. ուսման և ուսուցման որակի բարելավման ուղղված ներդրումներ.
5. հավասար հնարավորություններ.
6. թափանցիկություն և հաշվետվումակություն:

«Մեզ համար ծայրահեղ անհրաժեշտություն է կրթության համընդհանուր ճգնաժամի հաղթահարումը: Մոտ 1 միլիարդ մարդ կրթության հնարավորություն երբեք չի ունեցել, յուրաքանչյուր չորրորդ կինը գրագետ չէ, մինչդեռ իրավիճակը կարող է փոխվել գիտենք աշխարհն ի գոյու է անել այդ:

Քաղաքական կամքի ու անհրաժեշտ միջոցների համակցության դեպքում կրթությունը մատչելի կդառնա բոլորի համար, սակայն կառավարությունների ինքնագոհ հանգստության արդյունքում դա մոտ ապագայում չի կատարվի:

## ՉԱՅՆ ՄԵԾԱՑ

Այնտեղ, ուր չկա կրթություն և դաստիարակություն, չէ կարող լինել ընկերական կյանք. իսկ ուր չկա ընկերական կյանք, այնտեղ թագավորում են միմյանցից բաժանող և հեռացնող եսական սկզբունք, որի հիմքի վերադ թե միայն բան չէ շինվում, այլ հառաջուց շինվածները ևս քանդվում են:



Միխայել Նալչատյան

«Մեռելահարցով»

## Ա Յ Ս Հ Ա Մ Ա Ր ՈՒ Մ

- Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում \_\_\_\_\_ էջ 2
- Հանուն հանրության իրավական իրազեկության \_\_\_\_\_ էջ 3
- Ջանիբեկ Ղուկասյան. «Բուժման լավագույն միջոցը հավատի վերականգնումն է» \_\_\_\_\_ էջ 4
- Կանոն Առաքելյան. «Բնության պահպանությունն՝ առաջնահերթություն» \_\_\_\_\_ էջ 4
- Իրավական ակտեր \_\_\_\_\_ էջ 5
- Միշա Հարությունյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության \_\_\_\_\_ էջ 5
- Մորի Թառոյան. «Մարդկայնության կարողի թունանյանական դրսևորումները» \_\_\_\_\_ էջ 6
- Նաիրա Պեպանյան. «Նախասահմանված փրկությունը» \_\_\_\_\_ էջ 7
- Տեր Վահան քահանա Ազարյան. «Աղոթքի մասին» \_\_\_\_\_ էջ 7
- Իմ բաժին քարը Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքին \_\_\_\_\_ էջ 8
- Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ \_\_\_\_\_ էջ 8



# Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում

## ՀԱՍՏԱՋԱՅՆԱԳԻՐ ԸՆԴԴԴԵՄ ՍԱՐԴԱՎԱ ՃԱՌՈՒԹՅԱՆ

2008 թ. փետրվարի 1-ին ուժի մեջ է մտել Եվրոպայի խորհրդի Մարդավաճառության դեմ պայքարի մասին համաձայնագիրը: Սկզբնական Գանձարեկության արտաքին գործերի նախարար և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի նախագահ Կուրթ Չելչեկը և այս փաստաթղթի կարևորությունը, որի հիմնական նպատակն է պաշտպանել մարդավաճառության գոհերին միաժամանակ կանխելով չարիքը և ըստ օրենքի պատասխանատվության ենթարկելով հանցագործներին:



Ճայնագրի արդյունավետ կենսագործումն վերահսկվող կիրականացվի Մարդավաճառության դեմ ձեռնարկվող գործողությունների փորձագետների խմբի կողմից:

Համաձայնագիրն ստորագրվել է 2005 թ. մայիսին Վարշավայում կայացած Եվրոպայի խորհրդի անդամ երկրների և կառավարությունների ղեկավարների 3-րդ զագաթնաժողովի ընթացքում, բայց դեռևս չի վավերացվել 24 անդամ երկրների, այդ թվում՝ Ղազախստանի կողմից, իսկ, օրինակ, Ռուսաստանը, Թուրքիան և Ադրբեջանն այն տասը անդամ երկրների շարքում են, որոնք անգամ դեռևս չեն ստորագրել այն: Համաձայնագրի ուժի մեջ մտնելու կապակցությամբ այն վավերացրած 13 անդամ երկրները (Ալբանիա, Ավստրիա, Բուսնիա, Բելգիա, Բուլղարիա, Խորվաթիա, Կիպրոս, Դանիա, Ֆրանսիա, Կաստան, Սլովակիա, Սլովենիա, Ռումինիա և Սլովակիա) հանդես են եկել միացյալ հայտարարությամբ՝ կոչ անելով Եվրոպայի խորհրդի մյուս անդամ և ոչ անդամ երկրներին և Եվրոպա-

ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՕՐԱՅՈՒՅՑ  
Մարտի 1 - Մահապատժի վերացման միջազգային օր  
Մարտի 8 - Կանանց միջազգային օր

կան համայնքին հնարավորինս շուտ ստորագրել համաձայնագիրը:  
Մարդավաճառությունը համաշխարհային երևույթ է, որը հաճախ առնչվում է կազմակերպված հանցավորության հետ: Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության աշխարհում տարեկան շուրջ 2.45 միլիոն մարդ դառնում է մարդավաճառության զոհ: Թմրամիջոցների և զենքի առևտրից հետո այն ամենաշահութաբեր հանցավոր գործունեությունն է, որի տարեկան եկամուտը կազմում է 33 միլիարդ դոլար:

### ԱՍԻԱ

#### Ամենաարդար ընտրությունները Պակիստանի պատմության ընթացքում

Մարդու իրավունքների ասիական հանձնաժողովի հայտարարությունը Պակիստանում կայացած ընտրությունների վերաբերյալ

Պակիստանի ազգային և նահանգային խորհրդարանների հանձնդիմանուր ընտրությունների քվեարկության արդյունքում նախագահ Մուշարաֆի վաղաջակարգին ընդդիմադիր աշխարհիկ և ժողովրդավարական քաղաքական կուսակցություններ հայտնվել են կառավարություն ձևավորելու համար բարենպաստ պայմաններում: Ընտրություններն ավարտվել են Մուշարաֆի կառավարության կողմից ձևավորված կորնական կուսակցությունների ու նրանց դաշնակցությունների գրեթե լիակատար պարտությամբ:



Հարող կուսակցությունները վճռորոշ դեր են խաղացել Պակիստանի պաշտոնակա արված գլխավոր դատավոր Իֆտիխար Չուրֆի պաշտոնում վերականգնման գործում, իրավունքի տիրապետությանը, դատական անկախությանը, սահմանադրության վերականգնմանն ու արտակարգ իրավիճակի ընթացքում գեներալ Մուշարաֆի կողմից ձեռնարկված բոլոր գործողությունների հետևանքների վերացմանն ուղղված շարժման մեջ: Ընտրությունների արդյունքներն ընկալվում են որպես ռազմական ուժերի գործողությունների դեմ ելանք և ակաբեյման ուժերակազմված բոլոր սպանալիքների դիմադրած պարոն Չուրֆի և 55 դատավորների պայքարի հաղթանակ:

Ժամանակն է, որ նախագահ Մուշարաֆը, սահմանադրության պահանջներին համապատասխան, ընտրված կուսակցությունների ներկայացուցիչներին փոխանցի իշխանությունը, որը ժողովրդի կողմից է շնորհվել՝ իբրև բռնապետության և ճնշումների դեմ բողոքի արտահայտություն:

Փետրվարի 18-ին կայացած ընտրություններից հետո, որոնք, ինչպես խոստացել էր Մուշարաֆը, համարվում են երկրի պատմության մեջ ամենաարդար ու բախանցիկ ընտրությունները, նախագահն ընդունել է իր կուսակցության պարտությունը՝ պաշտոնապես խոստանալով համագործակցել նորընտիր խորհրդարանին հետ:

Մարդու իրավունքների դիտակի մամուլի հաղորդագրություն

#### Մարդու իրավունքների բարեփոխումներ Ադրբեջանում

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Դանարբերգը գեկույց է ներկայացրել Ադրբեջանում մարդու իրավունքների ոլորտում առկա վիճակի վերաբերյալ: Համաձայնագրերը ողջունել է երկրի անկախացումից հետո նկատվող առաջընթացը՝ հատկապես արդարադատության և երկրի ներքին տեղահամակցած անձանց կենսապայմանների բարելավման ուղղությամբ, ինչպես նաև 2006 թ. ընդունված մարդու իրավունքների

պաշտպանությանն ուղղված գործողությունների ազգային ծրագիրը կենսագործելու իշխանությունների կողմից ստանձնած պարտավորությունը: Սակայն նա նշել է նաև մի շարք բացթողուններ դատական համակարգի, ոստիկանության աշխատակիցների վարքագծի և ցմախ դատապարտվածների վիճակի առնչությամբ: Նա նաև ընդգծել է խոսքի ազատության սահմանափակումների և խտրականության վերացման անհրաժեշտությունը:



Համեմակատարն իշխանություններին կոչ է արել ավարտել դատական համակարգի բարեփոխումները երաշխավորելով եվրոպական չափանիշներին համապատասխան լիարժեք անկախություն, անաչառություն և արդյունավետություն, ինչպես նաև ձեռնամուխ լինել կաշառակերության դեմ պայքարին:

Համեմակատարը մտահոգություն է հայտնել հետաքննությունների ընթացքում հատկապես ընդդիմության ներկայացուցիչների կամ լրագրողների հանդեպ խոշտանգումներ կիրառելու և կամայական ձեռնարկությունների անընթացքով: Նա առաջարկել է մարդու իրավունքները ուսուցանել ոստիկանության աշխատակիցների շրջանում: Հաստատված կանոնները հիմնախնդիրներից է նաև տեղեկատվության մատչելիությունը:

Ադրբեջանում տագնապի երևույթ է դարձել մարդավաճառությանը, որի գոհերը պետության կողմից լիարժեք պաշտպանված չեն:

Երեխաների իրավունքների առնչությամբ գեկույցը կոչ է անում ծավալել տեղեկատվական գործունեություն կանխելով երեխաների դեմ ուղղված ցանկացած բռնություն, հատուկ միջոցներ ձեռնարկել օրենքի կիրառման և դատական համակարգում դեռահասների պաշտպանությունը երաշխավորելու համար:

Ձեկույցում առաջարկություններ կան նաև փոքրամասնությունների պաշտպանության ու ինտեգրման զարգացման ուղղությամբ:

Մարդու իրավունքների հանձնակատարն անդրադարձել է նաև Լեռնային Ղարաբաղի խնդրին՝ առաջարկելով քայլեր ձեռնարկել հատկապես ներքին տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության, նրանց կենսապայմանների բարելավման և տեղաշարժվելու ազատության ապահովման ուղղությամբ:

Ձեկույցը կազմվել է 2007 թ. սեպտեմբերին հանձնակատարի Ադրբեջան կատարած պաշտոնական այցի արդյունքների հիման վրա:

Եվրոպայի խորհրդի մամուլի բաժին

#### ԵՎՐՈՊԱ Մարդու իրավունքները Բուսնիայում և Հերցեգովինայում

Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Դանարբերգը գեկույց է ներկայացրել Բուսնիայում և Հերցեգովինայում մարդու իրավունքների ոլորտում առկա վիճակի վերաբերյալ: Նա նշել է, որ թեև երկրի իշխանությունները վավերացրել են եվրոպական և միջազգային հիմնական պայմանագրերն ու համաձայնագրերը, սակայն բարեփոխումների իրագործման համար անհրաժեշտ է հետագա քայլերի ներդրում: Նրա առաջարկու-

թյունները հիմնականում վերաբերում են ներքին տեղահանված անձանց ու հայրենադարձների, գեյուների, երեխաների, աղքատության ու հասարակական մեկուսացման խնդիրներին:

Ըստ համեմակատարի տարիներ շարունակվող հակամարտությունը հանգեցրել է տևական աղքատության, հասարակական մեկուսացման և անհավասարության:

Նա նշել է, որ անհրաժեշտ է խթանել տեղահանվածների դարձը հայրենիք առանց խտրականության նրանց համար ապահովելով համապատասխան պայմաններ և ապաստան:

Հանձնակատարն ազգային փոքրամասնությունների, հատկապես գեյուների պաշտպանության առնչությամբ առաջնահերթ է համարել նրանց կրթության, աշխատանքի, առողջության և ապաստարանի իրավունքների կենսագործումը:

Ձեկույցում կան նաև առանձին առաջարկություններ կանանց և երեխաների դեմ բռնության վերաբերյալ, ինչպես նաև պետական մարմինների համակարգում մարդու իրավունքների պաշտպան գրասենյակի հիմնելու վերաբերյալ: Ձեկույցը կազմվել է համեմակատարի 2007 թ. հունիսին Բուսնիա և Հերցեգովինա կատարած պաշտոնական այցի ընթացքում ստացված տվյալների հիման վրա:

Եվրոպայի խորհրդի մամուլի բաժին

### ԱՖՐԻԿԱ

#### ՄԱԿ-ի աֆրիկյան միության առաքելությունը Դարֆուրում



Դարֆուրի հակամարտության հետևանքով տեղահանված առվակազմ 2.3 միլիոն մարդկանցից շատերն այժմ ապրում են Դարֆուրի շրջակայքում տեղակայված 65-ից ավելի ճամբարներում:

Ճամբարներից շատերը շրջապատված են անպիտան ռազմաբերկ, որտեղ դժվար է անգամ ծառ գտնել: Բռնաբարության են ենթարկվում բոլոր այն կանայք, ովքեր դուրս են գալիս ճամբարից՝ շուկա գնալու կամ վառելի փայտ հավաքելու: Այս ամենն իրականացվում է Քամադուբոյի ոստիկանության, կառավարության զինվորների, ընդդիմության զինված խմբերի և ճյուղիկ այլ տեղահանվածների կողմից:

Տեղի ոստիկանությունը բռնաբարությունն օգտագործում է որպես զենք հարձակումների ժամանակ մարդկանց պատժելու և նվաստացնելու համար: Նրանք հաճախ կանանց տանում են ոստիկանական ճամբարներ՝ ամիսներ շարունակ դատապարտելով սեռական ստրկության:

Տուժած կանանցից շատերը, որպես կանոն, չեն հայտնում իրենց հետ պատահածի մասին, քանի որ գրեթե անհավանական է, որ մեղավորը պատասխանատվության կկանգնի, և չեն ցանկանում վճարել իրենց հեղինակությունն ու հետագա հնարավոր անունությունը հետանկարը:

Ոստիկանությունը հազվադեպ է հետաքննում արձանագրված բռնաբարությունների դեպքերը, քանի որ կասկածաբար բռնաբարողները սուղանակա զինված ուժերի ներկայացուցիչներ են: Իրոջ դեպքերում նույնիսկ ձեռնարկվում են հենց դեպքի մասին հաղորդողին:

# Մենք՝ քաղաքացիական հանրապետությունը

Ի Տ Կ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



## Ի Ր Ա Վ Ա Կ Ա Ն

## Ի Ր Ա Զ Ե Կ ՈՒ Թ Յ Ա Ն

### Հ Ա Ն ՈՒ Ն

### Հ Ա Ն Ր ՈՒ Թ Յ Ա Ն



Առաջելությունն է՝ օգնել մարդկանց իմանալ և պաշտպանել իրենց իրավունքները: Նպատակներն ու խնդիրներն են՝

- իրավունքի տիրապետության հաստատում:
- քաղաքացիական հասարակության ձևավորում:
- մարդու իրավունքների պաշտպանություն:
- իրավունքների, օրենքների լուսաբանում ու տարածում:
- Գրանցվել է՝ 2000 թ.:
- Նախագահն է՝ Մարատ Դադուցը:
- Հասցեն՝ Գրանցվել է՝ Գրիսի, Մաշտոցի 3
- Հեռ./հեռապատճեն՝ (0284) 2-40-20,
- Էլ. փոստ՝ itek@rambler.ru

#### ԳՈՐԾՈՒՆԵՐԹՅՈՒՆ

Իրավունքների տեղեկատվական կենտրոնը (ԻՏԿ)

- Կազմակերպում է անվճար իրավաբանական խորհրդատվություն սոցիալապես անապահով քաղաքացիների համար:
- Կատարում է տեղեկատվական աշխատանքներ՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերի լուսաբանման և տարածման ասպարեզում:
- Պարբերաբար կազմակերպում է միջոցառումներ՝ նվիրված մարդու իրավունքների պաշտպանությանն ու ժողովրդավարության հաստատմանը:
- Իրականացնում է իրավապաշտպան գործունեություն:

Իր գործունեության ընթացքում հաջողությամբ իրականացրել է մի շարք ծրագրեր՝ համագործակցելով միջազգային տարբեր հեղինակավոր կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝

- ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ
- ԵԱԳԿ-ի հայաստանյան գրասենյակ
- ՄԱՆ Միջազգային զարգացման գործակալություն (USAID)
- Քաունթերփարթ ինքնընչյուն (CASP)
- Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակ
- Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամ
- Վորլդ Վիժն Արմենիա
- Վարչապետի մարդու իրավունքների հելփինկան ֆոնդ

ԻՏԿ-ի գործընկերների անվանացանկը շարունակ աճում է:

ԻՏԿ-ում ներգրավված են մարդու իրավունքների մասնագետներ, իրավաբաններ, փորձառուներ ու նեցող այլ մասնագետներ:

ԻՏԿ-ն ունի մշտական գործող աշխատակազմ, ԳԿ-ին աջակցում են 21 կամավորներ, որոնք հաջողությամբ ընդգրկվում են իրականացվող ծրագրերում:

Կազմակերպությանը դիմում են տարեկան 1800-2000 քաղաքացի՝ ստանալով անվճար իրավաբանական օգնություն:

Յուրաքանչյուր տարի դեկտեմբերի 10-ին ԻՏԿ-ի նախաձեռնությամբ կազմակերպվում են Մարդու իրավունքների օրվան նվիրված միջոցառումներ:

«Իրավունքների տեղեկատվական կենտրոն» ԳԿ-ն Հայաստանում ակտիվորեն գործող «Համագործակցություն համուն բաց հասարակության» դաշինքի անդամ է:

Գրանցված է Հայաստանում մարդու իրավունքների հարցերով զբաղվող իրավապաշտպան կազմակերպությունների տեղեկագրում:

#### ԻՐԱՎԱՆԱՅՐԱԾ ԾՐԱԳՐԵՐ

• «Ազատության զանգակ» ծրագրի

արդյունքում 21 ուսանողներ մասնակցել են «Մարդու իրավունքներ» դասընթացին, ստացել վկայականներ և հետագայում իրենց գիտելիքները փոխանցել Գորիսի դպրոցների թվով 250 աշակերտներին: Դպրոցներում ստեղծվել են մարդու իրավունքների վերաբերյալ տեղեկատվական անկյուններ, հրատարակվել է «Ազատության զանգակ» թերթը, որն անվճար բաշխվել է դպրոցներում:

• «Առողջ ապագա» ծրագրի արդյունքում 300 աշակերտներ զարգացրել են իրենց գիտելիքներն առողջ կենսաձևի վերաբերյալ:

• «Իրավական տեղեկատվական ասակցություն տեղական ինքնակառավարմանը» ծրագրի արդյունքում ստեղծվել է մարդու իրավունքների և իրավական գրականության գրադարան, ինչպես նաև իրավական-տեղեկատվական արդիական համակարգ: Հրատարակվել են բաշխվել են 33 գործող օրենքների վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ:

• «Աջակցություն քաղաքացիական հասարակության զարգացմանը և մարդու իրավունքների պաշտպանությանը Մյունխենի մարզում» ծրագրի արդյունքում Գորիսի համայնքում ստեղծվել են մարդու իրավունքների և ԳԿ գործող օրենքների վերաբերյալ տեղեկատվական անկյուններ, կազմակերպվել են տեղեկատվական սեմինարներ մարդու իրավունքների, գործող օրենքների և ժողովրդավարության սկզբունքների վերաբերյալ:

• «Աջակցություն քաղաքացիական նախաձեռնությունների զարգացմանը» ծրագրի արդյունքում Մյունխենի 9 համայնքներում ստեղծվել են նախաձեռնող խմբեր, որոնց միջոցով հնարավորություն կստեղծվի համայնքներում իրականացնել քաղաքացիական նախաձեռնություններ, հրատարակվել է

«Գորիսի 24 համայնքների սոցիալ-տնտեսական պատկերի վերլուծական տվյալները» զրոյուկը:

• «Ժողովրդավար ինքնակառավարում» ծրագրի արդյունքում Գորիս քաղաքի ավագանու կողմից ընդունվել է քաղաքացիների ընդունելության վերաբերյալ կանոնակարգ: Քաղաքացիները հնարավորություն են ստացել ծանոթանալու ավագանու գործունեությանը և մասնակցություն ունենալու ավագանու որոշումների կայացման գործընթացին:

• «Նայիր ապագային» ծրագրի արդյունքում դիտարկվել են Մյունխենի մարզի երիտասարդության հիմնահանդիսները՝ ներկայացվելով 2007 թ. ԱՄ քնտրություններին մասնակցող կուսակցություններին, կազմակերպվել են քննարկումներ:

Ծրագրի նպատակն էր խթանել երիտասարդության մասնակցությունը ընտրական գործընթացներին:



• «Հասարակական դիտորդում հանուն իրավունքների պաշտպանության» ծրագրի նպատակն է նպաստել կայուն երաշխիքների ստեղծմանը՝ ազատագրված մարդկանց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելու սկզբունքների պահպանման համար:

## Նոր գրականություն Մարդու իրավունքների գրադարանում

Վանաձորի մարդու իրավունքների գրադարանում ստացվել է նոր գրականություն:



1. «Հելսինկյան դիտակ - անվտանգություն և մարդու իրավունքներ» (Helsinki Monitor; security and human rights). Լիդեռնողական հելսինկյան կոմիտեի կողմից հրատարակվող ամսագիրը լուսաբանում է ԵԱԳԿ-ի աշխատանքն ու սկզբունքները և նպատակ ունի խթանել մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները՝ արժարժեքով այդ բնագավառի ներկա զարգացումները: Ամսագրի հերթական՝ 18-րդ համարում տեղ են գտել ԵԱԳԿ-ի գործունեությանը և մարդու իրավունքների պաշտպանությանը, փորձառություններին իրավունքների պաշտպանու-

թյան խնդիրներին վերաբերող մի շարք հոդվածներ և այլն:

2. «Հակիրճ մարդու իրավունքների մասին» (Human rights brief). Վաշինգտոնի Ամերիկյան համալսարանի Մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի կենտրոնի կողմից հրատարակվող ամսագրի հերթական՝ 15-րդ համարը ներառում է նորություններ միջազգային իրավունքի, միջազգային ջրերական կառավարման, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային համակարգերի ու մեխանիզմների, ՄԱԿ-ի և այլ մարմինների մասին:

3. «ՀԱՄԿ». ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԼԻԿԻՈՑ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ կողմից

հրատարակվող ամսագրի հերթական՝ 9-10 և 11-րդ համարներում տեղ են գտել քարոզչական, աստվածաբանական, պատմա-ուսումնասիրական, երիտասարդական, ինչպես նաև քրիստոնեական դաստիարակությանը վերաբերող մի շարք ուշագրավ նյութեր:

4. «Կլիմայի փոփոխություն» (Climate change). ՄԱԿ-ի հանրային տեղեկատվության վարչության և Ոչ կառավարական կազմակերպությունների համաժողովի կողմից հրատարակված սույն գեկույցը ներկայացնում է 2007 թ. սեպտեմբերի 5-7-ը Նյու Յորքում կայացած 60-րդ ամենամյա համաժողովի նյութերը, կլիմայական փոփոխություններին վերաբերող հետազոտությունների վերջնական արդյունքները և դրանց ազդեցությունը մոլորակի վրա:

ՎԱՐՄԻԿ ՄԵՍՐՈՂՅԱՆ





# Իրավական ակտեր

**Հարգելի ընկերացիներ,**  
**Սպորտի ներկայացման ենթ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում 2007 թ. դեկտեմբերի 6-ին կարգավորված վերջին փոփոխությունների և լրացումների մի մասը: Գրանք հիմնականում վերաբերում են աշխատանքային իրավունքի ոլորտին և օգտակար ու կարևոր են գործարարների և աշխատողների համար:**

**Կարևոր փոփոխություն և լրացում է նաև անչափահասներին ծիախող, ալկոհոլային խմիչքներ, քմրամիջոցներ և հոգեմեդիկամենտները ստրապի կամ պոռնոգրաֆիա բովանդակող գրականություն և փոստերիզներ վաճառելու կամ դրանց վաճառքի մեջ ներգրավելու վերաբերյալ հոդվածը:**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՕՐԵՆՔԸ

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԳՐԵՐԻ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ընդունվել է 2007 թ. դեկտեմբերի 6-ին

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (1985 թ., դեկտեմբերի 6, այսուհետ՝ օրենսգրք) 41-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտել (բացառությամբ սույն օրենսգրքի 41, 41<sup>1</sup>, 41<sup>2</sup>, 96<sup>1</sup> հոդվածներով, 158 հոդվածի տասնյոթերորդ մասով, 169<sup>1</sup>, 169<sup>2</sup>, 169<sup>3</sup> հոդվածներով նախատեսված դեպքերի) առաջացնում է նախազգուշացում խախտում թույլ տված անձի նկատմամբ»:

2) 2-րդ մասի «երկուհարյուրապատիկի» բառը փոխարինել «հինգապատիկի» բառով:

Հոդված 2. Օրենսգրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 41<sup>1</sup>-41<sup>3</sup>-րդ հոդվածներով.

Հոդված 4<sup>1</sup>. Աշխատողների ներկայացուցչների իրավունքների իրականացմանը խոչընդոտելը

Աշխատողների ներկայացուցչների՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված իրավունքների իրականացմանը խոչընդոտելը առաջացնում է տուգանքի նշանակում:

նակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար:

Սույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ կրկին անգամ, մեկ տարվա ընթացքում՝

- առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար:

Հոդված 4<sup>2</sup>. Գործադուլ հայտարարելու մասին որոշումն ընդունվելուց հետո և գործադուլի ընթացքում բոլոր կամ առանձին աշխատողներին իրենց աշխատատեղերը հաճախելու խոչընդոտելը, աշխատողներին աշխատանք տրամադրելուց հրաժարվելը, գործադուլի մասնակցելու համար աշխատողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելը

Գործադուլ հայտարարելու մասին որոշումն ընդունվելուց հետո և գործադուլի ընթացքում բոլոր կամ առանձին աշխատողներին իրենց աշխատատեղերը հաճախելու խոչընդոտելը, աշխատողներին աշխատանք տրամադրելուց հրաժարվելը, գործադուլի մասնակցելու համար աշխատողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Սույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ կրկին անգամ, մեկ տարվա ընթացքում՝

- առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Հոդված 4<sup>3</sup>. Աշխատանքի պետական տեսչություն հաշվետվություն չենթկայացնելը

Գործատուի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում Աշխատանքի պետական տեսչություն հաշվետվություն չենթկայացնելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ նվազագույն աշխատավարձի քանապատիկի չափով:

Հոդված 3. Օրենսգրքի 158-րդ հոդվածում՝

1) 16-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18 տարին չլրացած անձանց ծխախոտ, ալկոհոլային խմիչքներ, քմրամիջոցներ և հոգեմեդիկամենտներ, սարսափ կամ պոռնոգրաֆիա բովանդակող գրականություն և տեսաերիզներ վաճառելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում վաճառողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ տասնյոթերորդ մասով.

«18 տարին չլրացած անձանց ծխախոտ, ալկոհոլային խմիչքների, քմրամիջոցների և հոգեմեդիկամենտների, սարսափ կամ պոռնոգրաֆիա բովանդակող գրականության և տեսաերիզների վաճառքի մեջ ներգրավվելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում առևտրի իրականացման վայրի կազմակերպիչի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով»:

Հոդված 4. Օրենսգրքի 169<sup>1</sup>-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 169<sup>1</sup>. Ուսանց պայմանագրի կնքման աշխատող պահելը կամ աշխատանքային պայմանագրում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված պայմանները չենթառնելը՝

Սույն աշխատողի կնքման աշխատող պահելը կամ աշխատանքային պայմանագրում Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված պայմանները չենթառնելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար:

Սույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ կրկին անգամ, մեկ տարվա ընթացքում՝

- առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար:

Հոդված 5. Օրենսգրքի 169<sup>2</sup>-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 169<sup>2</sup>. Աշխատանքային պայմանագրի գրանցման, գրանցամատյանի վարման ու պահպանման կարգը խախտելը կամ աշխատանքային հաշվարկի տեղեկագիր չվարելը՝

Աշխատանքային պայմանագրի գրանցման, գրանցամատյանի վարման ու պահպանման կարգը խախտելը կամ աշխատանքային հաշվարկի տեղեկագիր չվարելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քանապատիկի չափով:

Սույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ կրկին անգամ, մեկ տարվա ընթացքում՝

- առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քանապատիկի չափով»:

Հոդված 6. Օրենսգրքի 169<sup>3</sup>-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գործատուի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ժամկետներում աշխատավարձ չհաշվարկելը կամ չվճարելը կամ ոչ աշխատողի մեղքով առաջացած պարտավորողի ժամանակ վճարում չկատարելը կամ «Նվազագույն անձնական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով նախատեսված չափից պակաս աշխատավարձ սահմանելը կամ այդ մեծությունը զերազանցող չափով աշխատավարձը սխալ հաշվարկելը՝

- առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ յուրաքանչյուր աշխատողի մասով չհաշվարկված կամ չվճարված աշխատավարձի մեկ քառորդի չափով:

Սույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ կրկին անգամ, մեկ տարվա ընթացքում՝

- առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ յուրաքանչյուր չհաշվարկված կամ չվճարված աշխատավարձի մեկ երկրորդի չափով»:

Հոդված 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՆԱԽԱԳԱՂ՝ Ռ. ՌԶՈՒՐՅԱՆ  
 25.12.2007  
 ԳՕ-296

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

### ՄԻՇԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

2007 թ. հունիսի 7-ին Ստրասբուրգի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պալատը՝ Նախագահությամբ Ք. Չուպանչիչի և դատավորներ Ս. Բիրսանի, Ջ.Պ. Կուստյայի, Ա. Գյուլումյանի, Գ. Բյորգ-Վինմոնի, Ի Չիլեյեի և Ի. Բերո-Լեֆլորեի, ինչպես նաև բաժանմունքի քարտուղար Ս. Քուեռայի մասնակցությամբ, քննելով պարզել է, որ Հայաստանի Հանրապետությունը խախտել է Երևան քաղաքի բնակիչ Միշա Հարությունյանի արդար դատաքննության իրավունքը, որն ամրագրված է Մարդու իրավունքների և հիմնարար պատվարների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագրի դրույթներով:

1998 թ. սահմանափակ թիվ 33651 գործատու մարտական հերթափոխության մեջ զոհվող 6 զինծառայողներից 3-ի դիակը հայտնաբերվել է իսրայելում. վերջինս մահացել էր հրազենային վնասվածքից: Զինծառայողների թվում էր նաև Ս. Հարությունյանը: Հարցաքննության համար ռազմական ոստիկանությունը բերված զինծառայողները ենթարկվել են խառնուրդների, ոստիկանության աշխատակիցները հարթաչուրթերով սեղմել են զինվորների մատները՝ խոտովաճուրջներով կորզում նպատակով, ինչը խախտում է Մարդու իրավունքների եվրոպական համաձայնագրի մի շարք դրույթներ: Խոչընդոտում էր հարյուրյանը հարկադրված է եղել հայտարարել, թե ինքնաձիգի պատահաբար կրակել է զինծառայող 3-ի վրա:

2003 թ. Սյունիքի մարզի առաջին ատյան դատարանի կողմից կանխատեսված սպանության կատարման համար մեղավոր ճանաչված և 10 տարի ժամկետով ազատազրկման դատապարտված Ս. Հարությունյանը, որ պատժից պայմանակաճուրջներով վաճառված տապալ էր արձակվել, գաճառ ներկայացրեց Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ ընդդեմ Հայաստանի Հանրապետության:

Քննելով գործը՝ դատարանը միաձայն հանձնեց այն եզրակացության, որ Ս. Հարությունյանի՝ արդար դատաքննության հնարավորությունը զրկված լինելը հանդիսանում է համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում, և վճեց, որ պատահաբար չվտարվել էր Հայաստանը, պարտավոր է որպես ոչ նյութական վնասի փոխատուցում երեք ամսվա ընթացքում Ս. Հարությունյանին վճարել 4000 եվրո:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընդդեմ Հայաստանի Հանրապետության

# ՄՇԱԿՈՒՅՑ

Հովհաննես Թումանյանի ծննդյան 139-ամյակի առթիվ

## ՄԱՐԳԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՏԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԴՐԱՅՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Մարդկայնության կարոտի վիրավորված արդարանքը լավե են բոլոր դարերում: Այդ կարոտով այրվել է նաև Թումանյանը: Նա ապրում էր մի ժամանակաշրջանում, երբ «Արևելքի հին տառապայա» Հայաստանի դավաճան ղեկավար միջուկում էր տարբեր հրդեհների վառված սնցուղիների մեջ:

«Թաղված փառքերի հիշատակները», սարսափից ու ցատուից քարացած ավերակները բավական էին հոգնեցնելու «անհույս ցանկալուց, անկերջ կարոտից», բայց այդպես չեղավ: Թումանյանը կարողացավ իր ժամանակի երեսին չարտել մեծ մարդասերի իմաստության՝ դաժան երկունքով լի ստղերը:

Այս տեսակետից Հ. Թումանյանի ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ են զբաղում քառյակները, որոնք հնարավորություն են տալիս արտահայտելու լինել-չլինելու կիսով չափ առեղծվածային, կիսով չափ խոշտանգված հարցերի մեջ խորատուգված անհատի փիլիսոփայական խոհերը, ինչ-որ բանով պակասավոր աշխարհի վերափոխման տենչը:

Մի առիթով Հ. Թումանյանը գրել է. «Մարդիկ կան, որ ապրում են միայն իրենց համար, մարդիկ կան, որ ապրում են ուրիշների տանջելու համար, մարդիկ էլ կան, որ ապրում են տանջվողներին օգնելու համար»: Հ. Թումանյանը քայլում է մաքստուն եր վերջինների հետ: Նա համոզված էր, որ «միայն սրտով է, որ գեղեցիկ ու մեծ գործեր են կատարվում», «Ինչ-որ լավ բան է լինելու, լինելու է սիրով, իսկ սրով՝ երբեք»:

Աշխարհի մտածողների սկզբնական տառապանքներից մեկն էլ եղել է ներդաշնակ կյանքի կարոտը, «մարդասպան» բառի պարտությունը «մարդասերի» առաջ:

Դրա համար էր Թումանյանին այնքան հարազատ «են առաջին ինտելիգենտի» Հայնեի վիրավորված ազնվության ճիշդ, իր ժամանակի մոռացության մշուշի հետ մենամարտող հանճարեղ միայնակի՝ Պետրոս Աղամյանի կերպարը:

Չատկի օրվա առնչությամբ մի հիշողություն է բողբել, այդ օրը մորթում են երեխաների սիրած, անխոս մտերին դարձած գառուկը: Թումանյանը չի կարողանում ոչ մի բանով, ոչ մի մեղմացնող քարոզով հանգստացնել հուզված մանկանը: Բանաստեղծն այդ օրը համարում է «արյան, որկրամոլության ու շաշլուխի օր»: Պատասխան չէ, որ բանաստեղծի մտքերում «թևերն արնոտ ու սուղոր» շատ հավերժ են թևածուլ:

Երագունքս մի մաքի Մոտս եկավ հարցմունքի.  
- Աստված պահի ջո որդին,  
Ո՛նց էր համը իմ ծագի...

1917 թ. դեկտեմբեր Այս չորս տողի թողած կրահումների մեջ ինչ ասես, որ չի կարելի գտնել, մայրական սրտի գեղեցիկ բնագրի օրհներգ, ուր բերզական նրբությամբ հագեցած հոգու թափանցիկ փիլիսոփայություն:

Բանաստեղծը ճգնում էր ի չեղով, ոգևորությամբ շարժել հոգիների անբափանց վարագույրները, սակայն իր դիմաց տեսնում էր մույն ծիծաղելի փքվածներին: Այդպես է հանճարեղ երազողների ճակատագիրը. անվերջ տառապանք և հավերժականի մասը լինելու բացառիկ զգացողություն:

Ինչքան ցավ են տեսել ես, Նեմզ ու դավ են տեսել ես, Տարել, ներել ու սիրել,- Վատը՝ լավ են տեսել ես:

1917 թ. դեկտեմբեր Տարել, ներել, սիրել. երեք բառ՝ պարզ,

անպաճույճ...

Առաջին բառի մեջ արդարավոր լուրջություն կա, երկրորդի մեջ՝ խտացված կակիծ, երրորդի մեջ՝ քնուշ մխիթարություն, իմաստունի ներողամտություն և յուրովի ժխտում ապրած հիասթափության:

Վայրագ ուժերի հարթանակն ստիպել է Թումանյանին խոսել վիրավոր մարդու ձայնով. «Ավա՛ղ, կարծես թե իզուր են ապրում ու անցնում մեծ փիլիսոփաները, մեծ գիտնականներն ու բանաստեղծները, ազգերի համար մեծ մասամբ նրանք հանդիսանում են լոկ որպես շքեղ զարդարանքներ»: Ցրվել են այդ ծանր մտքերը, և Թումանյանական աննիջ հոգին նորից է արձանագեղ ոգևորության սրբազան վայրկյանի առաջ, որն ընդունակ է մարդուն վերածնել հավերժական փյունիկի մնան: Թումանյանը հորդորում էր երիտասարդ գործերին արևի նման նայել աշխարհին. այդպիսի լույսեր տալով էր սպառնում բանաստեղծի մեջ մարդը, մարդու մեջ՝ բանաստեղծը:

Անասելի դժվար էր մարդու մարդկայնության կարոտով ապրել մի իրականության մեջ, երբ կարծես մրցման մեջ էին մտել դիվական բնագոյները՝ չար խոհերի ծաղրը ծանրացնելու համար:

«Մեծ անցյալի ավերակների վրա ապրող և ըստ ամենայնի ավերակ ժողովրդի» լինելիության համատեղությունը գործակից կամենեց Թումանյանին և օգնեց նրան արձագանքելու Թայրենիցի այդու սիրո, ժառանգական զգացմանը այսպիսի հպարտ ներշնչումով:

Բարձր է հընց աշխարհքն հայոց ու Մասիսը երկնադետ.  
Իմ խոր հոգին եմ բարձունքին խոսք է բացել Նոյա հետ –

Մնախ բանից, ըսկզբանից էր չըկան էլ դեռ չըկար,



Մինչև վախճանն անվախճանի ըընդունում է դարձ դար:

1921 թ. մայիս Երկարում էր մարդասպանի մարդ դառնալու ճանապարհը... Քաղաքակրթության արյունոտ ավազանը շարունակում էր մկրտել հայ ժողովրդի չգյուրթյան բեզարած հարցը:

Մարդու մարդկայնության կարոտն արտահայտելու համար Թումանյանն օգտագործում է նույնիսկ նեցեցյալների ուշացած զգոնմանը:

Երկու չիրմ իրար կից, Հավերժական լուռ դըրկից, Թախնում են պաղ ու խորհում, Թե՛ ի՛նչ տարան աշխարհիցի:

1918 թ. փետրվար Պարզություն ու խորություն, խորություն՝ գարմանակի ու ապշեցմոյ:

Հոգեբանորեն այսպես կարելի է պատկերացնել մեծ լուռեցուն: Մի անբաթ աչք, որը հետևում է մարմնից դուրս նետված և հրդեհների մեջ գալարվող իր սրտին, որն այրվում է, սակայն չի մոխրանում:

ՍՈՐԻ ԹԱՆՈՒՅԱԼ

## ԱՆԻՐԵՅ ԿՐԱՈՒՅԷ



Լեռ ճանաչված ծաղրանկարից, սկարագարող և սցենարիստ Անդրեյ Կրաուզեն (ծնվ. 1947 թ.) հայտնի է իր բազմաթիվ ծաղրանկարներով ու պատարներով:

Ներկայացվող աշխատանքները վերցված են Նրա «Սիրում է ինձ» («*Lubta mnie*») 1980 թ. հրատարակված ծաղրանկարների ալբոմից:



Ընդդեմից Բանաստեղծության ասուց անմեղքների և անցագրերի



# Հոգեւոր

## ՆԱԽԱՍԱՀՄԱՆՎԱԾ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Լիով և ողորմ դուք մեր փրկության համար աշխատեցե՛ք» (Փիլիպ. Բ.12)

Աստված ոչնչից ստեղծեց տիեզերքն ու այն ամենը, ինչ կա նրանում... Արարելով մարդուն իր պատկերով և նմանությամբ՝ Նա իր ամենատես և ամենագեղ զորությամբ գիտեր, թե մարդ արարածը կարող է սայթաքել և զայթակողությամբ պատճառով զանց առնել իրեն տրված առաջին ու միակ պատվիրանը՝ վայելելով երկրավոր դրախտի բոլոր պտուղներին: Չուտել միայն չարի և բարու գիտության ծառի պտղից, այն էր պահեցողության Տեղումնի անդրանիկ հրահանգը, որի խախտումն անհետևանք մտնաց համայն աշխարհի գաղթ անորոշության համար:

«Եվ Աստված ասաց՝ Լույս լինի, և Լույս եղավ...»: Այդ Լույսի հետ արարվեցին նաև հրեշտակները՝ Աստծո հրեղեն զորքերը՝ Լուսեղեն արարածներ: Աստված նրանց 9 դասով կարգեց՝ բյուր-բյուրոց, այն է թե՛ հազար-հազարավոր հրեշտակներ: Ամենքի ղեկավարն Արուսյակ կամ Լուսակիր հրեշտակն էր, որ ամենամտն էր Տիրոջը, սակայն իքնահանար մեծամտությամբ և հպարտությամբ վարակված՝ կաննեցավ Արարչին հավասարակալ լինել և չարաչար պատժվեց. ընկավ իր փառքից ու «աստանա» կոչվեց, որ նշանակում է «խախտակոր»:

Անկայն իր հետևից տարավ իր հետ ապատամբած բոլոր հրեշտակներին, որոնք «դևեր» կոչվեցին: Ամենքն էլ չարափառ եղան, քանի որ բարուց հեռացան, չարիքը նախընտրեցին և արագահաս կորստյան մտնովեցին՝ ժառանգելով հավիտենական տանջանքը, քանի որ անզղույն են և անբարոյական: Սա էր տիեզերական ապատամբությունը՝ մայրը մեղաց պարագլխի:

Մահաբեր հպարտությանը հաջորդեց նախանձը նրանց հանդեպ, որ ստեղծվեցին 6-րդ օրը՝ լինելով արարչագործության թագն ու պսակը, քանի որ Աստծո պատկերով ստեղծվեցին՝ նրա նման բանական, ազատական, արարելու կարողությամբ օժտված և իշխանություն ունեին ծովի ձկների, երկնքի թռչունների և բոլոր արարածների վրա և այնքան սիրելի էին Աստծուն:

Շնորհագարդ նախամարդիկ՝ Ադամն ու Եվան, կարող էին մահ չճաշակել, եթե պահեին Տիրոջ անդրանիկ պատվիրանը՝ պահեցողությամբ հաղթելով թշնամուն: Ավա՛ր, դյուրաթեք եղան, զրկվեցին շնորհներից, Աստծուն տեսնելուց, ժառանգեցին մահի, խոցելի դարձան հիվանդություններից և զանազան փորձությունների դուռ բացեցին իրենց համար: Սակայն չարուճակուն էին մնալ Ստեղծողի հոգածության ներքո՝ ի տարբերություն անկալի հրեշտակների:

Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ Հոգին, որ Սուրբ Երրորդությամբ մեկ Աստված են, հավասարապատիվ, անժամանակ, միաժամանակ և միակամ, ինչպես արեգակը, որ ունի

իրե գույնը, ճառագայթ և ջերմություն, որոնք միասին արեգակ են կոչվում, վճիռ կայացրեց, որ մեկը պիտի կրի Ադամի ու ողջ մարդկության համար սահմանված պատիժը, որ մեղքի հատուցումն է:

Մարդը մարդու փոխարեն չէր կարող հատուցել, քանի որ ամեն մեկը հազիվ իր գործած մեղքի պատասխանը տար: Ուտի պետք էր մեկը, որ ամենը լիներ և իշխանություն ունենար այլոց փոխարեն պատասխան տալու: Ուրեմն նա, ով պիտի փրկեր, նաև պիտի դատեր: Եթե Հայրը դատեր, ոչ ոք չէր փրկվի, քանի որ խիստ է, եթե Սուրբ Հոգին դատեր, ոչ ոք չէր դատվի, քանի

Քրիստոսի հրաշակվեցի անորոշության մասին սուրբ Պրոքոր Տաթևացին ասում է. «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածաներ: Ասել է թե՛ անպարագրելի Աստված անփոփոխ կույսի արգանդում, որպեսզի խոնարհվելով մինչև մարդացում՝ մեղավոր մարդկությանը հաղորդ դարձնի աստվածային անպատում բարիքներին, վերաբացի եղեմի դարպասները, որ Աստծո նման լինեցե՛ք՝ կատարյալ և զեծ չարից ու խավարից: Այս ամենի քաջ գիտակցումով, բոլոր ժամանակների հայազգի և համաքրիստոնեական սրբերը ներբողում են, թե խաղաղության համար ողվող պայքարում լավագույն զենքերից է պահեցողությունը, որի հետևորդ լինելով՝ շատեր երկինք մտան, քանի

Քրիստոսի հրաշակվեցի անորոշության մասին սուրբ Պրոքոր Տաթևացին ասում է. «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածաներ: Ասել է թե՛ անպարագրելի Աստված անփոփոխ կույսի արգանդում, որպեսզի խոնարհվելով մինչև մարդացում՝ մեղավոր մարդկությանը հաղորդ դարձնի աստվածային անպատում բարիքներին, վերաբացի եղեմի դարպասները, որ Աստծո նման լինեցե՛ք՝ կատարյալ և զեծ չարից ու խավարից: Այս ամենի քաջ գիտակցումով, բոլոր ժամանակների հայազգի և համաքրիստոնեական սրբերը ներբողում են, թե խաղաղության համար ողվող պայքարում լավագույն զենքերից է պահեցողությունը, որի հետևորդ լինելով՝ շատեր երկինք մտան, քանի

Քրիստոսի հրաշակվեցի անորոշության մասին սուրբ Պրոքոր Տաթևացին ասում է. «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածաներ: Ասել է թե՛ անպարագրելի Աստված անփոփոխ կույսի արգանդում, որպեսզի խոնարհվելով մինչև մարդացում՝ մեղավոր մարդկությանը հաղորդ դարձնի աստվածային անպատում բարիքներին, վերաբացի եղեմի դարպասները, որ Աստծո նման լինեցե՛ք՝ կատարյալ և զեծ չարից ու խավարից: Այս ամենի քաջ գիտակցումով, բոլոր ժամանակների հայազգի և համաքրիստոնեական սրբերը ներբողում են, թե խաղաղության համար ողվող պայքարում լավագույն զենքերից է պահեցողությունը, որի հետևորդ լինելով՝ շատեր երկինք մտան, քանի

Քրիստոսի հրաշակվեցի անորոշության մասին սուրբ Պրոքոր Տաթևացին ասում է. «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածաներ: Ասել է թե՛ անպարագրելի Աստված անփոփոխ կույսի արգանդում, որպեսզի խոնարհվելով մինչև մարդացում՝ մեղավոր մարդկությանը հաղորդ դարձնի աստվածային անպատում բարիքներին, վերաբացի եղեմի դարպասները, որ Աստծո նման լինեցե՛ք՝ կատարյալ և զեծ չարից ու խավարից: Այս ամենի քաջ գիտակցումով, բոլոր ժամանակների հայազգի և համաքրիստոնեական սրբերը ներբողում են, թե խաղաղության համար ողվող պայքարում լավագույն զենքերից է պահեցողությունը, որի հետևորդ լինելով՝ շատեր երկինք մտան, քանի

**Ցանկացած իրավիճակում մեր առջև ընտրության երկու ճանապարհ կա՝ Տիրահաճ կամ ղիվաշուկ. քանի որ դևերն ընդամենը հուշում են և երբևէ չեն կարող պարտադրել:**

որ մեր պահվածքն է հարթում մեզ համար փրկության կամ հավիտենական կորստյան ճանապարհ, և այն հանգամանքը, թե Աստված կանխազետ է, թող բնավ չչփոթեցնի մեզ և ճակատագրապաշտություն չնոր: Չկա ճակատագիր, և մեզնից որևէ մեկն ի սկզբանե նախասահմանված չէ կորստյան: Պարզապես Աստված իր կատարյալ իմաստությամբ գիտի, թե մեք որ դեպքում ինչ քայլ կարող ենք նախընտրել:

Ցանկացած իրավիճակում մեր առջև ընտրություն երկու ճանապարհ կա՝

Տիրահաճ կամ ղիվաշուկ, քանի որ դևերն ընդամենը հուշում են և երբևէ չեն կարող պարտադրել: Այդ մասին է վկայում Սուրբ Պրոք Հոգի Կոստանյանուն զեղեղված Հոգի պատմությունը, ըստ որի երբ բոլոր հրեշտակների հետ սատանան էլ է կանգնում Աստծո առաջ, Տերը զովում է իր ճառա Հոգին: Աստանան Հոգի հավատարմությունը պայմանավորում է նրա ապահով կենթությանը: Այնուամենայնիվ թույլ է տալիս ներդրություններ պատճառել Հոգին ամեն կերպ, միայն կյանքին չվնասել: Մի՛թե Հոգի համար դյուրին էր դիմանալը, բայց համբերությամբ հաղթեց և առաջվանից ավելին ունեցավ:

Միայն այս պատճառով ահեղ Դատաստանի օրը Տիրոջ և բարեպաշտ հրեշտակների հետ միասին սրբերն էլ պիտի դատեն մեզ, քանի որ մեզ նման մահկանացու և մարմնավոր էին, բայց հարթեցին աշխարհին՝ կազմելով աստվածասիրտ եկեղեցու հաղթանակած մասը, և պիտի զբաղեցնեն անկալի հրեշտակների

տեղը՝ ըստ իրենց գործերի: Իսկ մեք, որ տակավին աշխարհի վրա ենք, մարտնչող եկեղեցին ենք և հաղթության ակնկալներով դիմում ենք թե՛ անմիջապես Սուրբ Երրորդության երեք անձերին, թե՛ հաղթանակած եկեղեցու սրբերին, որոնք, լինելով Աստծուն սիրելի, բարեխոսում են մեզ համար և լսելի դարձնում մեր աղոթքները: Հաճախ էլ խնդրում են առանց մեր գիտության:

Սուրբ Հոգուն առաջնորդությամբ Արարիչն իր սիրով է ողորդում ամենքիս՝ թե՛ երկնավորներին և թե՛ տակավին երկրի վրա եղողներին՝ բարախուն դարձնելով եկեղեցու ներքին հոգևոր զարկերակը, ռեզգելով մեր հոգու բարեխոսում անդաստանը: Այսպես նմանվում ենք այն ժամունկներին, որ թթովախոս են, տկարաբայլ և բռնելով ավազ թույր ու եղբայրների ձեռքը՝ ապահով քայլում են դեպի երկնավոր արքունիք՝ ամենագութ և ամենախման Աստծո կանչի համաձայն: Նեղ ու անծուկ է ճանապարհն այն, որ տանում է դեպի փրկություն և բազում քայներ է պահանջում: Դրանց մեջ վարպետանալու մարտավարությունը սովորում ենք սուրբ հայրերի խորհուրդներից՝ ըստ այն խոսքի, թե սատանան ոչնչից այնքան չի վախենում, որքան սրբերի խրատներից, քանի որ բացահայտում են իր և իր արքայազնների (դևերի) ծածուկ հնարները և վարժեցնում հաղթել:

Ուրեմն մեք, անսպառնալից խորհուրդներին, տոկանք, քանի դեռ աշխարհի վրա ենք և չաճաչեցնեք մեր պահապան հրեշտակներին, երբ մեր աղոթքներն ու գործերը տանում են առ Աստված:

ՆԱԻՐԱ ՊԵՊԱՆՅԱՆ

### ՀՈԳԵՎՈՐ ՏՈՒՍՅՈՒՅՑ

Մարտի 8 - Մուսնի ի վիրապն  
Մարտի 8 - Օր մեծի պահոց  
Մարտի 16 - Ծաղկազարդ

## Աղոթքի մասին

Սուրբ Հայկուն Մակիդոնիսի խոսքը  
Գեղարքունիքի և իսկոնիականության

Երբ ես մեկն ու մեկին ասում եմ. «խնդրիր Աստծուն, աղոթիր Նրան, մտեցիր Իրեն աղոթքով», ինձ պատասխանում են. «Ես խնդրեցի մի անգամ, երկու, երեք, տասը և քսան անգամ և դեռ չառացա խնդրածս»: Մի դադարիր խնդրելուց, մինչև որ չատանաս խնդրածի, աղոթքի վերջը խնդրելի ստացումն է: Դադարիր այնժամ, երբ կատանաս, կամ ավելի լավ է չդադարել, այլ հայտնառնալ աղոթքի մեջ: Եթե ստադար, հայտնիր գոհությունը: Շատերը եկեղեցի են գալիս, և նրանց շուրթերից աղոթքի հազարավոր բառեր են դուրս գալիս, սակայն չիմանալով ինչ աղոթեցին: Նրանց շուրթերը շարժվում են, սակայն ձայնը չի հասնում սեփական ականջներին: Ինքն չես լսում, ինչպե՛ս ես ուզում, որ Աստված լսի: Դու ասում ես, ծորարում ես, սակայն միտքը քափառում է դրսում, շուրթերը աղոթում են, իսկ միտքը խորհում է եկամտուրների, պայմանագրերի, ունեցվածքի և անկերական հարաբերությունների մասին: Աստանան առավել հարձակվում է հենց աղոթքի պահին, քանզի չար է և գիտի, որ աղոթքով օրհնություններ ենք ձեռք բերում: Ուրիշ ժամանակ մեզ կարծես ոչ մի միտք չի այցելում, բայց հենց աղոթքի ենք կանգնում, հազարավոր մտքեր են հայտնվում, որպեսզի ձեռնունայն ելնենք աղոթքի: Ուրեմն՝ պետք է այդ ժամանակ նմանվեք և օրհնակ վերցնեք, այն քահանայի, տկար, մեծված և արհամարհված կոնցի, որ Տիրոջն աղաղակեց, որ թշվառի աղչիկն և ասաց. «Ողորմիր ինձ, քանզի աղչիկս այսպես է»: Այսպես մեք էլ պիտի խնդրեք մեր մեղքերից, այսահարությունից փրկվելու համար, քանզի չունենք այսահար աղչիկ, բայց ունենք մեղավոր հոգի: Դիվախարն առաջացնում է խոճախարություն, իսկ մեղավորը՝ առեկություն: Մա արժանի է ներման, իսկ սա չունի արդարացում:

Սա կարծ մի աղոթք. «Ողորմիր ինձ»: Կարծ է, բայց առաջացնում է ծով մարդասիրություն, քանզի որտեղ ողորմությունն է, այնտեղ նաև բոլոր բարիքներն են: Եթե անգամ աղոթքի համար եկեղեցում էլ չես, կանչիր և ասա. «Ողորմիր ինձ»: Սա քեղուզ առանց ձայնի, առանց շշուկի: Երեմիան գտնվում էր ողորմող գուրքի մեջ և դեպ իրեն դարձրեց Աստծո ուշադրությունը: Դանիելն առյուծների մեջ, երեք մանուկները հրաբորբը կրակի մեջ արժանացան Աստծո ողորմությանը: Ողորմություն խնդրեց ավազակը, և խաչի վրա բացվեցին դրախտի դռները: Հոբբ, Մատան փտության վրա, ողորմություն ստացավ իր խնդրանով: Ժամանակին նեղության մեջ լինելով՝ Մովսեսը չնչին չարտաբերեց, սակայն Աստված նրան ասաց. «Ինչե՛ն» ես ինձ աղաղակում» (Ելից 14:15):

Մուսայն է դու, սիրելի՛ գավակս, աղոթիր անձամբոյս և ողորմություն խնդրիր, և դատարկորի մտտ փրկածուկի ալիքները կիսմարտով:

Աստված միշտ մոտ է:

ՏԵՐ ՎԱՀՅԱՆ քահանա ԱՋՈՒՅԱՆ  
Վանաձորի Ա. Նարեկ առաջնորդանիստ  
եկեղեցու քահանա

## ԻՄ ԲԱԺԻՆ ԲԱՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՊՐՈՅՔ ԸՆՆՔԻՆ

Վասածոր քաղաքի կենտրոնական պողոտայի (Տիգրան Մեծի 1) վրա կառուցվելու է Մարդու իրավունքների հայկական դպրոցի շենքը:

Այս տարի կմեկնարկի շենքի շինարարությունը, որին իր աջակցությունը կարող է բերել յուրաքանչյուր ոք՝ իր բաժին ջարդ (ընդամենը 250 դրամ) դնելով շենքի պատին: Հիրավի, մարդու իրավունքները համընդհանուր բնույթ ունեն: Եվ Մարդու իրավունքների շենքն էլ համընդհանուր ջանքերով է կառուցվում:

Վիճակագր. օրեցօր մեծանում է ներդրումներ կատարողների թիվը:



5. Գրետա Հակոբյան, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան (12 քաղ․ 3.000 դրամ)
6. Գագիկ Պապիկյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (10 քաղ․ 2.500 դրամ)
7. Հայկ Աթայան, Լոռու մարզ, գ. Դեղ (10 քաղ․ 2.500 դրամ)
8. Նարե և Նարեկ Հակոբյաններ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քաղ․ 5.000 դրամ)
9. Մարիամ և Արմեն Հակոբյաններ, Լոռու մարզ, ք. Վանաձոր (20 քաղ․ 5.000 դրամ)
10. Գևորգ Կիրակոսյան, Արագածոտնի մարզ, ք. Աջտարակ (40 քաղ․ 10.000 դրամ)

ՀՍԻԿ նախագահության, աշխատակազմի և ջախատների անունից շնորհակալություն ենք հայտնում Մարդու իրավունքների կրթության զարգացմանը նպաստելու համար:

Ան այսօր ՄԻՀԴ-ի շենքի կառուցման հանգանակությանը մասնակցություն է ունեցել 42 մարդ 7 մարզերից՝ ներդրելով 106.050 դրամ գումար: ՄԻՀԴ-ի շենքի կառուցման համար անհրաժեշտ է 440.880.000 դրամ կամ 1.763.520 քաղ:

ՆԿԻՐԱԲԵՐՎԵԼ Է 424 քաղ  
 ՄԱՅՑԵԼ Է 1.763.096 քաղ

- ՆՈՐ ՊԱՏՄԱԴԻՐՆԵՐՆ ԵՆ՝
1. Անահիտ Սահակյան, Սյունիքի մարզ, ք. Կապան (14 քաղ․ 3.500 դրամ)
  2. Լուսինե Երիցյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քաղ․ 2.000 դրամ)
  3. Գոհար Մանուկյան, Լոռու մարզ, ք. Վանաձոր (8 քաղ․ 2.000 դրամ)
  4. Եվգինե Հակոբյան, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան (4 քաղ․ 1.000 դրամ)

**ԱՆՍՈՍՆԳ**

Բնության գործերին մարդկային անխիճ միջամտության հետևանքը

Սյունիքի մարզի Արծվանի գյուղում փետրվարի 5-ին արտառոց դեպք գրանցվեց: Սուս Գրիգորյանի խուրճառ անունով կոլով 4-րդ անգամ ծննդաբերեց ու երկգլխանի հորթուկ ունեցավ: Սակայն անասնաբույժները չկարողացան փրկել հորթուկի կյանքը, քանի որ հորթուկի 2-րդ գլուխը խանգարում էր բնական ծննդաբերությանը, ուստի անասնաբույժները նպատակահարմար գտան փրկելու նրա մորը:

Արծվանի բնակիչները նշում են, որ սա առանձնահատուկ և մտահոգիչ դեպք է: Տարիներ շարունակ լեռնահանքային կոմերցիոնների արշավախմբերը տեղակայված է գյուղի վարչական սահմաններում, ու չի բացառվում, որ այս երևույթը դրա ազդեցության հետևանքն է: Ըստ գյուղացիների պատմածի՝ անասուններն այնտեղից ջուր են խմում, արածուս հարակից տարածքներում:

Անասնաբույժ Տիգրան Դանիելյանի վկայությամբ՝ հորթուկը կապրեք նաև երկու գլխով, եթե խուրճառ կոլը կարողանար ծննդաբերել: «Չէ՛ որ 9 ամիս կովն իր որովայնում կրել է պտղին, ու հիդիությունը նորմալ է ընթացել»,- ասաց անասնաբույժը:

ՏԻԳՐԱՆ ԱՍԵՓՈՍՅԱՆ  
 ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան

«Սյունիքի բաղաբացիական հասարակության զարգացման կենտրոն» ՀԿ

**Կայքէջ՝ նԿԻՐԱԾ ԶՈՒՄԱԻ ԳԵՐԵՁՈՒՆԱՏԱՆ**

Վերջերս բացվել է նոր կայքէջ՝ [www.djulf.com](http://www.djulf.com)՝ նվիրված միջնադարյան հայկական հինարձանական մեծագույն ժառանգության՝ Նախիջևանի տարածքում գտնվող Հին Ջուղայի գերեզմանատան ավերմանը: Կայքի նպատակն է Ադրբեջանի Հանրապետությունում տեղեկատվություն տարածել մշակութային արժեքների պահպանման վիճակի մասին: Ջուղայի կործանումը և թանգարանը ներկայացնող կայքէջը 2005 թ. դեկտեմբերին Ադրբեջանական բանակայինների կողմից ոչնչացված միջնադարյան Ջուղայի գերեզմանատան մասին պատմող առցանց աղբյուրներից հաստատապես առաջինն է: Ադրբեջան-սիրանական սահմանում տեսագրված և եվրոպական խորհրդարանի կողմից դատապարտված ավերումը հերքվել է Ադրբեջանի պաշտոնյաների կողմից՝ որպես ոչ հավաստի տեղեկություն:

Նորաստեղծ ծրագիրը ներառում է շարժանկար և այլ տեղեկություններ Ջուղայի գերեզմանատան պատմության և ավերման վերաբերյալ: Նկարների բաժինը պատկերում է գերեզմանատան՝ նախկինում չիրապարկված բազմաթիվ նկարներ, որոնց հեղինակն է 1928 թ. Ջուղա այցելած ֆրանս-լիտվական մշակութային քննադատ Ջ. Բալտրուսաիթիսը: Նրա հեղինակությամբ ևս մեկ հրատարակություն է թվայնացվել և տեղադրվել նույն կայքէջում:



Համաշխարհային բանկը, Քաղաքների միությունը և Նորվեգիայի արտաքին գործերի նախարարությունը 18-25 տարեկան երիտասարդներին հրավիրում են մասնակցելու շարադրությունների միջազգային մրցույթի՝ «Ի՞նչ կարող եք անել ձեր երազանքների թաղաքը ստեղծելու համար» թեմայով:

Շարադրությունը պետք է գրված լինի անգլերեն և առցանց տարբերակով ուղարկվի մինչև 2008 թ. մարտի 23-ը: Հաղթողները կստանան գումարային 1000-5000 ԱՄՆ դոլար մրցանակ:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [www.essaycompetition.org](http://www.essaycompetition.org) կայքէջը:

Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա

Հարգելի ընթերցող, խնդրում ենք Ձեր դիտարկումներով օգնել «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթի առավել արդյունավետ ու նպատակային աշխատանքին՝ լրացնելով սույն ձևաթերթիկը և ուղարկելով խմբագրություն: Չեզոք ընդամենը պահանջվում է լինել անաչառ և արագ արձագանքել: Կանխավ շնորհակալ ենք Ձեր տրամադրած ժամանակի համար:

1. Ըստ Ձեզ՝ մեր հասարակության մեջ զարգացած է իրավական մշակույթը:
 

Ոչ	Մասամբ	Այո
----	--------	-----
2. Հասարակությունը իրագե՛կ է իր իրավունքներին:
 

Ոչ	Մասամբ	Այո
----	--------	-----
3. Թերթը խրախուսում է մարդու իրավունքների պաշտպանությունը:
 

Չի խրախուսում	Մասամբ	խրախուսում է
---------------	--------	--------------
4. Թերթն արժանի է հասարակությանը հուզող հարցեր:
 

Ոչ	Մասամբ	Այո
----	--------	-----

5. Ի՞նչ թեմաների շուրջ հոգվածներ կցանկանայիք կարող մեր թերթի էջերում:

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

Ձեր տվյալների նշումը պարտադիր չէ:

անուն, ազգանուն \_\_\_\_\_ հասցե \_\_\_\_\_  
 հեռախոս \_\_\_\_\_ էլ. փոստ \_\_\_\_\_

Լրացված ձևաթերթիկը խնդրում ենք ուղարկել ՀՍԻԿ գրասենյակ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրք., թիվ 2 հասցեով: Կարելի է պատասխաններ ուղարկել նաև էլ. փոստով՝ [lc@acrpc.am](mailto:lc@acrpc.am) կամ հեռապատմամբ՝ +374 (322) 4 47 81:

Թերթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ իջեպնում չի կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող վիստաթուղթ:

<p>Հրատարակության Դ տարի                  Հիմնադրող և հրատարակիչ                  Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն                  ՀՀ, 2003 թ. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրք., թիվ 2                  Գեղ. +374 (322) 2-29-87                  հեռապատմամբ՝ +374 (322) 4-47-81                  էլ. փոստ՝ <a href="mailto:acrpc@acrpc.am">acrpc@acrpc.am</a>; <a href="mailto:lc@acrpc.am">lc@acrpc.am</a>                  համացանցի էջ՝ <a href="http://www.acrpc.am">www.acrpc.am</a></p>	<p>Գլխավոր խմբագիր՝ Գևորգ Մանուկյան                  խմբագիր՝ Դերմինե Բաբոյան                  Համակարգչային ձևավորող՝ Արմեն Սահակյան</p> <p>Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթի» պարտադիր է:</p> <p>Հրատարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:</p>	<p>Շվեդիայի 2 տպագրական մամուլ:                  Ստորագրված է տպագրության 2008 թ. 02.27:                  Տպագրակա՛րը՝ 2000:                  Տպագրվել է «21-րդ դար-97» հրատարակչատանը:</p> <p>Իրավական մշակույթ                  Legal Culture                  Правосаа култура                  Տարածվում է անվճար</p>
--	--	---